ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/209

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.07.2021թ. թիվ 26/26-1/11985-2021 գրությամբ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 20.07.2021թ. թիվ 242 գրության հիման վրա, 27.07.2021թ. թիվ 26/26-1/11985-2021 գրությամբ նախաձեռնել է «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.08.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի համար արևային ֆոտովոլտային համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԱՊՁԲ-02/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՌԵՆՅՈՒԱԲԼ ՔՈՔԱՍԸՍ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ. տեղի ունեցած հայտերի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ կատարվել է մասնակիցների հայտերի բացում և գնային առաջարկների ամրագրում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. տեղի ունեցած հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի ա) ենթակետով սահմանված հիմքով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետով սահմանված կարգով ուղարկել լիազորված մարմին:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի

նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ այստեղ առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք կոպիտ խախտումներ, որոնք էլ իրենց հերթին ոչ իրավաչափորեն հանգեցրել են տվյալ մասնակցի համար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ: Մասնավորապես.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի համար արևային ֆոտովոլտային համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԱՊՁԲ-02/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՌԵՆՅՈՒԱԲԼ ՔՈՔԱՍԸՍ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.07.2021թ. տեղի ունեցած հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի ա) ենթակետով սահմանված հիմքով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետով սահմանված կարգով ուղարկել լիազորված մարմին:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդհանրապես չի պահպանվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Նախ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. տեղի ունեցած հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի ա) ենթակետով սահմանված հիմքով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետով սահմանված կարգով ուղարկել լիազորված մարմին:

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հանձնաժողովի ոչ մի նիստի արձանագրությամբ չի արձանագրել որևէ անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ: Հանձնաժողովը նիստը չի կասեցրել, որոշում չի կայացվել

Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով հնարավորություն ընձեռնել Ընկերությանը կատարել համապատասխան շտկումներ: Այսինքն գնահատող հանձնաժողովը չի կատարել Կարգի 41-րդ կետի պահանջները և չի պահպանել այդ կետով սահմանված ընթացակարգը:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 41-րդ և 46-րդ կետի պահանջները, որը սահմանում է, որ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ, ինչպես նաև մասնակցի ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունը, պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի նկարագրել որևէ անհամապատաս-խանությունը, այլ որոշել է Ընկերության տվյալները միանգամից ուղարկել լիազորված մարմին:

Միևնույն ժամանակ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որևէ արձանագրության մեջ առկա չէ Ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին տեղեկատվությունը: Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Փաստորեն, որպեսզի ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, անհրաժեշտ է միաժամանակ երկու հիմքի առկայություն՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում և դրա հետևանքով հայտի մերժում: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը չի կայացրել որոշում «ՌԵՆՅՈՒԱԲԼ ՔՈՔԱՍԸՍ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և ՍՊԸ-ի հետագա մասնակցությունը տվկալ Ընթացակարգին դադարեցնելու վերաբերյալ:

Ուստի նման պայմաններում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կոպտորեն խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների տրամաբանությունը:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «ՌԵՆՅՈՒԱԲԼ ՔՈՔԱՍԸՍ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն «ՌԵՆՅՈՒԱԲԼ ՔՈՔԱՍԸՍ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «ՌԵՆՅՈՒԱԲԼ ՔՈՔԱՍԸՍ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/209 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.07.2021թ. թիվ 242 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով տեղեկացնում ենք, որ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից ՀՎԷԷՀ-ԳՀԱՊՁԲ-02/2021 ծածկագրով կազմակերպված, 2(երկու) չափաբաժնից բաղկացած ընթացակարգի շրջանակներում ընթացող գնահատող հանձնաժողովի նիստի ժամանակ պարզվել է հետևյալը.

Ընթացակարգի հայտատուներից «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն ներկայացրել է ձեռք բերվող ապրանքների բնութագրերի մասին ոչ հավաստի տեղեկատվություն: Մասնավորապես, 1-ին չափաբաժնին վերաբերող տեխնիկական փաստաթղթերից մեկը (կցվում է) արհեստականորեն մշակվել է 2-րդ չափաբաժնի համար վավեր հանդիսացող փաստաթղթի հիման վրա: Մասամբ փոփոխվել են տեխնիկական չափանիշները: Փաստաթղթի 11-րդ և 12-րդ էջերում հստակ երևում են 2-րդ չափաբաժնի

համար նախատեսված ապրանքատեսակի համարները, ինչպես նաև վավեր չէ էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետով սահմանված կարգի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի ա) ենթակետի համաձայն, կից ներկայացնում ենք ընթացակարգին առնչվող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/209 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իր կարիքների համար արևային ֆոտովոլտային համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԱՊՁԲ-02/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի ա) ենթակետով սահմանված հիմքով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետով սահմանված կարգով լիազորված մարմնին ուղարկելու վերաբերյալ:

3. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, ***20.07.2021թ. թիվ 242 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:***

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.07.2021թ. թիվ 26/26-1/11985-2021 գրությունը, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի 20.07.2021թ. թիվ 242 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ընկերության դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իր կարիքների համար արևային ֆոտովոլտային համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԱՊՁԲ-02/2021» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի ա) ենթակետով սահմանված հիմքով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետով սահմանված կարգով լիազորված մարմնին ուղարկելու վերաբերյալ:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, ***20.07.2021թ. թիվ 242 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: ***<u>Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:</u>***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, հարկ եմ համարում արձանագրել, ***<u>որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ միայն չի պահպանել Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջը, այն է՝ հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը, այսինքն՝ չի արձանագրել թե Ընկերության կողմից ներկայացված հայտում ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել, այլ նաև խախտել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի</u>***

քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, այնուհետև, առանց Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, 20.07.2021թ. թիվ 242 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, ներկայացրել է լիազորված մարմնին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.07.2021թ. թիվ 26/26-1/11985-2021 գրությամբ «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**